ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
**ՆԱԽԱԳԱՀ**

---

«03» օգոստոսի 2020թ. № Ձ/3130-Ա

# Հ Ր Ա Մ Ա Ն

## ԱՐՄԱՆ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 44-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով, «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի ա) ենթակետով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 702-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության 17-րդ կետի 6-րդ ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովի թիվ 64/2020 եզրակացությունը

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Ծառայողական պարտականությունները ոչ պատշաճ կատարելու համար Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի Արևելյան մաքսատուն-վարչության Բագրատաշենի մաքսային կետ-բաժնի 3-րդ բաժանմունքի ավագ մաքսային տեսուչ Արման Միքայելի Ալեքսանյանի նկատմամբ կիրառել «նախազգուշացում» կարգապահական տույժը:
2. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի անձնակազմի կառավարման վարչության պետ Կարինե Գրիգորյանին՝ սույն հրամանն իրազեկել ողջ անձնակազմին:

ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Recoverable Signature

X

ԷԴՎԱՐԴ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Signed by: HOVHANNISYAN EDVARD 2001830505

ԷԴՎԱՐԴ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ